ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ամեն տարի Համաշխարհային օվկիանոս է թափվում մոտ 9 միլիոն տոննա պլաստիկե աղբ՝ պլաստիկե փաթեթներ, պոլիէթիլենային տոպրակներ, շշեր, խաղալիքներ և այլն: Սրանք աղտոտում են լողափերը, հայտնվում են ձկների ստամոքսներում, սպառնալիք դառնալով կենդանական աշխարհի համար:

Համեմատաբար շոշոր չափերի պլաստիկ իրերից զատ, պլաստիկե տոպրակների և շշերի քայքայման հետևանքով առաջանում է միկրոպլաստիկ փոշի, այն բարձրանում է մթնոլորտ, ընկնում կոյուղի և այսպես հայտնվում գյուղատնտեսական դաշտերում, ծովերում և այլուր:

Գիտնականները կոչ են անում պետություններին ավելի լրջորեն զբաղվել աղբամշակման աշխատանքներով, միջոցներ ձեռնարկել Համաշխարհային օվկիանոսի և օդի մաքրման համար: